Արձանագրություն N 3
«ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան «23» դեկտեմբերի 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Միքաելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Ասատրյան և Վ.Աթյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

I. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից շտկված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ
(Ն.Միքաելյան)

1.1 «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի 18.12.2019թ-ին կայացած հայտերի բացման նիստում մրցույթի մասնակից «Ասատրյանս» ՍՊԸ և «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ ՀԳ կողմից հայտով ներկայացված Համատեղ գործունեության պայմանագրում /երկլեզու՝ հայերեն և ռուսերեն/ և «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ-ի կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ին՝ ի դեմս Ս.Ասատրյանին տրված լիազորագրում հայտնաբերվել էր անհամապատասխանություն, մասնավորապես մրցույթի ծածկագիրը սխալ էր նշված, որի պատճառով գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել էր, և մասնակցին առաջարկվել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի No. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի պահանջները:

1.2 Մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝ 2019թ-ի դեկտեմբերի 20-ին, ներկայացվել են «Ասատրյանս» ՍՊԸ և «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի և «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ-ի կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ին տրված լիազորագրի վերախմբագրված տարբերակները:

II. «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ
(Ն.Միքաելյան)

2.1 «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «Ասատրյանս» ՍՊԸ և «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ ՀԳ կողմից ներկայացված փաստաթղթերը և արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Վերախմբագրված պայմանագրի ռուսերեն տեքստում՝ որպես պայմանագրի կողմ նշված է «Կրեստոն Անսար» ՍՊԸ-ն, իսկ հայերենում՝ «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ-ն,
- «Ասատրյանս» ՍՊԸ և «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ միջև կնքված համատեղ գործունեության պայմանագիրը կնքված է «Կրեստոն Անսար» ՍՊԸ-ի կնիքով,

- «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ-ի՝ ի դեմս կառավարիչ գործընկեր Զարիլբեկ Աբդուլաևիչի, կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ին՝ ի դեմս տնօրեն Ս.Ասատրյանին, տրված լիազորագիրը, որով վերջինս լիազորում է «Ասատրյանս» ՍՊԸ-ի տնօրեն Ս.Ասատրյանին իր անունից և փոխարեն հանդես գալու, այդ թվում՝ հայտում ներառվող փաստաթղթերը ստորագրելու համար, կնքված է ոչ թե «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ-ի, այլ «Կրեստոն Անսար» ՍՊԸ-ի կնիքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2.2 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ասատրյանս» ՍՊԸ և «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ ՀԳ վերախմբագրված պայմանագրում և «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ-ի կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ին՝ ի դեմս տնօրեն Ս.Ասատրյանի, տրված լիազորագրում առկա են անհամապատասխանություններ և անճշտություններ, գնահատող հանձնաժողովի կողմից դրանք չեն կարող դիտարկվել՝ որպես իրավական ուժ ունեցող փաստաթուղթ: Ուստի, «Ասատրյանս» ՍՊԸ-ի տնօրեն Ս.Ասատրյանը, որի կողմից ստորագրված են հայտում ներառված բոլոր փաստաթղթերը՝ այդ թվում՝ գնային առաջարկը, չի ունեցել համապատասխան լիազորություն «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ-ի անունից հանդես գալու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2.3 Հաշվի առնելով վերոգրյալը, և առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի No. 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 42-րդ կետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Ասատրյանս» ՍՊԸ և «Կրեստոն Բիշկեկ» ՍՊԸ ՀԳ հայտը, քանի որ համատեղ գործունեության կարգով մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից /«ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2.3 կետ/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

<u>III. Ոչ գնային պայմաններին բավարարող մասնակիցներին գնային առաջարկների նվազեցման միաժամանակյա բանակցությունների հրավիրելու մասին</u>
(Ն.Միքաելյան)

3.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի No. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և, հաշվի առնելով, որ «ՏԾԻԿ-ԳՀԾՁԲ-2019/5/1ՖԱ» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն, գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգին հայտ ներկայացրած և ոչ գնային պայմաններին բավարարող բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

<u>IV. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին</u>
(Ն.Միքաելյան)

4.1 . Գնահատող հանձնաժողոցը որոշեց նիստը կասեցնել, և միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2019թ-ի դեկտեմբերի 27-ին, ժամը՝ 16:00-ն, ք. Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում, 7-րդ հարկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Նարինե Միքաելյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Տաթևիկ Ասատրյան _____

Վլադիմիր Աթյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Հարությունյան _____